

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ВИШАП
НА СТЫКЕ
СКАЗКИ И РЕАЛЬНОСТИ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

VISHAP
BETWEEN
FAIRY TALE AND REALITY

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2019
PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻՇԱՊԸ
ՀԵՔԻԱԹԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՐՄԱՆԻՆ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Издаётся по решению Ученого совета Института археологии и этнографии НАН РА

To be published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography NAS RA

ՀԱԻ հրատարակչության խմբագրական խորհուրդ՝

Պավել Ավերիայան (գլխավոր խմբագիր), Լևոն Աբրահամյան, Գրիգոր Արեշյան,
Ռուբեն Բադալյան, Միհրան Գալսյան, Տորք Դալալյան, Ջուստո Տրաինա,
Տեո վան Լինտ, Լորի Խաչատրյան, Թամար Հայրապետյան, Սուրեն Հոբոսյան,
Հարություն Մարություն, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան,
Ադամ Սմիթ, Պարրիկ Տոնապետյան, Պիրեր Քաուի

Редакционная коллегия издательства ИАЭ:

Павел Аветисян (главный редактор), Левон Абрамян, Тамар Айрапетян,
Григорий Арешян, Рубен Бадалян, Мигран Галстян, Торк Далалян, Патрик Донабедян,
Питер Кауи, Тео ван Линт, Арутюн Марутян, Сурен Обосян, Армен Петросян,
Гамлет Петросян, Гагик Саргсян, Адам Смит, Джусто Траина, Лори Хачадурян

Editorial board of IAE Publisher:

Pavel Avetisyan (editor-in-chief), Levon Abrahamyan, Gregory Areshian, Ruben Badalyan,
Peter Cowe, Tork Dalalyan, Patrick Donabedian, Mihran Galsyan, Tamar Hayrapetyan,
Suren Hobosyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyun, Armen Petrosyan,
Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Հատորի խմբագիրներ՝ Արսեն Բոբոխյան, Ալեքսանդրա Զիլիբերտ, Պավոլ Հնիլա

Редакторы тома: Арсен Бобохян, Александра Джilibерт, Павол Гнила

Volume editors: Arsen Bobokhyan, Alessandra Gilibert, Pavol Hnila

ՀՏԴ 398.44

ԳՄԴ 82

Վ 630

Վ 630 Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին / ՀՀ ԳԱԱ: Հնագիտության և
ազգագրության ինստիտուտ: — Եր.: ՀԱԻ հրատ., 2019. — 652 էջ:

Ժողովածուն նվիրված է «Վիշապ» երկույթի մեկնությանը միջմասնագիտական համատեքստում: Ի
մի բերելով հնագիտության, ազգագրության, բանագիտության, բանասիրության, արվեստաբանու-
թյան և այլ բնագավառների տվյալները՝ գրքի հեղինակները փորձ են կատարում բացատրելու «Վի-
շապ» հասկացության տարատեսակ փոխակերպումները: Հատորը նախատեսված է ինչպես նեղ
մասնագիտական, այնպես էլ՝ մշակույթով և արվեստով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների
համար:

ՀՏԴ 398.44

ԳՄԴ 82

ISBN 978-9939-9208-6-3

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2019

ԴԵՎԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՅԱՎԱՏԱԿԱՆ ՉՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հասմիկ Գալստյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ներածություն

Դևի մասին պատկերացումներն արտացոլված են հայ բանավոր ավանդության գրեթե բոլոր ժանրերում՝ տարբեր գործառույթներով ու ընկալումներով: Հայ պատմագիրների վկայություններում, առասպելաբանության մեջ, հայկական հեքիաթներում, էպոսում, ժողովրդական գրույցներում, աղոթքներում և հավատալիքներում ընդհանրապես դևը նույնացվում կամ զուգահեռվում է քաջքերի, վիշապների և օձերի հետ: Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ հեքիաթներում և հեքիաթանման գրույցներում դևերը «մոտիկ առնչություն ունեն վիշապների հետ, և շատ հեքիաթներում վիշապներն ու դևերը փոխարինում են իրար» (Աբեղյան 1975, 90): Ի տարբերություն հեքիաթների՝ ժողովրդական գրույցներում դևը հանդես է գալիս որպես դեմոն, չար ոգի, ընկալվում է չարք, սատանա իմաստով: Մեր քննության առարկան դևերի ծագման, նկարագրման, բնութագրման, գործառույթային նշանակության հետ կապված խնդիրներն են հայ ժողովրդական սնահավատական գրույցների համատեքստում:

«Դև» բառի ստուգաբանությունը

Դևը ինչպես հայկական, այնպես էլ իրանական, արաբական, հնդկական և այլ ժողովուրդների առասպելաբանության մեջ բոլոր տեսակի չար ոգիներին ու գերբնական ուժերին տրվող ընդհանուր, պայմանական անուն է: Հին հայկական ավանդության մեջ տարածված «դեվը» տարբեր լեզուներում հանդես է գալիս հետևյալ նույնարմատ ձևերով՝ պահլավերեն *dēv*, պարսկերեն՝ *div*¹, գենդերեն՝ *daēva*, քրդերեն՝ *dev*, զազաների լեզվով՝ *dau*, *dewi*, վրացերեն՝ *devi*, սերբերեն՝ *divi*, ալբաներեն՝ *def*, ասորերեն *divā* և այլն (Աճառյան 1971, 657–658): Դ. Ալիշանը վերոնշյալներին ավելացնում է նաև *De-*

mon, *Diabolus*, *Diabble*, գերմաներեն՝ *Teufel*, պարսկերեն՝ *տիվ*, Ավեստայի լեզվում՝ դաիվա (Ալիշան 2002, 111): Մանսկրիտում «դև» բառը «տէվա» տարբերակով առաջացել է «տիվ» բայական արմատից, որ փայլել, լուսավոր լինել է նշանակում, իսկ «տէվա» նշանակում է Աստված, որին հայերենում անվանել են «Դի», «Դիք» (Մալխասեանց 1944, 516, 531): «Տէվա» նշանակում է նաև թագավոր, սրբազան անձ, տանուտեր, տան մեծ, ինչպես նաև քահանա, աստվածների անվանակից ու մերձավոր (Եազրճեան 1885, 1007–1010):

«Տէվա»-ի այսքան տարբեր իմաստային նշանակությունն ու կիրառությունը պայմանավորված է բառի հնագույն ծագումով: Արիացիներից անցնելով զրադաշտական հավատքի մեջ՝ բառը կորցնում է իր «լուսավոր» ու «աստվածային» (Եազրճեան 1885, 1007) նշանակությունը և ընդունում ճիշտ հակառակ իմաստ՝ չար, վնասակար, սուտ, խաբերա, խավարային և այլն: Տէվան, որ բողոքայականության մեջ նույնպես արտահայտում էր աստվածայնության գաղափարը, ավելի ուշ իր բացասական ընկալումներով հանդիպում է հնդկական վեդաներում: Դ. Ալիշանը նույնպես նկատում է, որ «միևնույն անունը շատ ազգերի մեջ «բոլորովին հակառակ» նշանակություն է ունեցել՝ իբրև «երկու դիմադեմ խմբի բաժանված, իրար առող»: Մեր և պարսիկների մեջ «դև» կոչվածը հնդկների, հույների, հռոմեացիների գերագույն աստվածն է՝ Տևա, Ջևա, Թեոս, *Deus* կոչմամբ» (Ալիշան 2002, 111): «Կրոնների պատմության մեջ հաճախ կարելի է նկատել այն երևույթը, որ բարի աստվածը կամ դիցազունը² ժամանակի ընթացքում օժտվում է չար աստծու, չար դիցազնի կամ դևի հատկություններով: Այս երևույթը կարելի է անվանել դիվացում» (Ավդալբեգյան 1969, 52): Դիվացման արդյունքում «դից»-ը (դիք,

1 Պարսկերենում *div* եզրը ունի մեկ այլ իմաստ, օգտագործվում է հաստատականություն կամ խիզախություն դրսևորած անձի վերաբերյալ, ինչպես Շահնամեում, որ *Pūšād-vand* անունով դիցազունն իր խիզախության ու ուժի համար անվանվում է *div* (Մասունեհ Էբրահիմի 2014, 11):

2 «Դիցազն» նշանակում է «կէս-աստուած». Նա կազմում է երկու բառից՝ «դից» – որոշ սկիզբն է «դի» կամ անելի ճիշտ՝ «դևս» (*deva*, *daeva*), որ է «ոգի» և «ազն» - որ է ցեղ. Ուրեմն ոգիների կամ աստուածների ցեղից՝ կէս – աստուած» (Էմին 1886, 40): Գ. Սրվանձոյանցը նույնպես նշում է, որ «դև, արմատ է նաև դիցազն բառին» (Սրվանձոյանց 1978, 60):

դից (դից), դիաք-աստված, կուռք) (Ջահուկյան 2010, 200) դառնում է «դի»:

Քրիստոնեության մուտք գործելու հետևանքով փոփոխվում են ժողովուրդների կրոնա-դիցաբանական հայացքները: Սա ենթադրում է, որ ժողովրդական ընկալումներում երբեմնի աստվածներն ու կիսաստվածները, որոնք պաշտվել են ու երկրպագվել, ընկալվում են որպես դևեր: Այսպես է բացատրում դև բառը նաև հայագետ Կ.Մելիք-Օհանջանյանը. «Դևը հին հայերի հեթանոսական կրոնում բարի աստվածություն է, քրիստոնեության մեջ՝ չար ոգի, հրեշ, հսկա» (Մելիք-Օհանջանյան 2008, 530): Հայ բանահյուսության մեջ դիվացման ամենաբնորոշ օրինակներից է քաջի կամ քաջքի օրինակը: Վերջիններս բնորոշվում էին իբրև բարի ոգիներ, հակադրվում էին վիշապագուսների ու դևերին: Ժամանակի ընթացքում «քաջք» բառը կորցնում է իր հիմնական իմաստը և դառնում «չարք» կամ «չարունք» բառերի նույնանիշը (Ավդալբեգյան 1969, 53–54):

Ըստ հունական առասպելաբանական պատկերացումների՝ դևերին է վերագրվում ինչ-որ անորոշ ու չճանաչված աստվածային ուժ՝ չար և հազվադեպ՝ բարեգործ, հաճախ մարդու կյանքի ճակատագիրը որոշող: Այն ընկալվում է որպես ակնթարթային արագությամբ հայտնվող և անհետացող մահացու ուժ: Դևերը նաև միջնորդ էին մարդկանց և աստվածների միջև (Лосев 1987, 366–367):

Դևերի ծագումը, քանակը և գործառնությունները հայ և օտար աղբյուրներում

Ժողովրդական պատկերացումների և Աստվածաշնչի վրա հիմնված ավանդության համաձայն՝ դևերը Աստծո ընկած հրեշտակի³ սատանայի⁴ գործն են. Ղ.Ալիշանի հաղորդմամբ՝ «սատանան կոչվում է դևերի իշխան» (Ալիշան 2002, 111), իսկ Կեսարիայի հայերի կարծիքով «դևերը սատանայի գործակալներն են» (Ալալայան 1937, 1774), «Սատանան դևերու ջոջն է» (Թովա-Կոպո 1898, թիւ 24, 462) և այլն:

Ժողովրդական բանավոր ավանդության մեջ բազմաթիվ գրույցներ կան չար ու բարի հրեշտակ-

ների ծագման, գործառնությունների ու փոխակերպումների մասին: Մուշ-Բուլանըխի, Ալաշկերտի ժողովրդական ավանդությամբ վկայվում է, որ Աստված լույսից ստեղծում է 12 դաս հրեշտակների, որ ծառայեն ու փառաբանեն իրեն: Նրանք գեղեցկահամ, նրբակազմ, միշտ երիտասարդ, թևավոր, մարդակերպ արարածներ են՝ միամիտ ու արդար, մեր աչքին անտեսանելի, բայց կարող են երևալ իրենց սիրած մարդու աչքին՝ երեխայի կամ ճերմակամորուս ծերունու կերպարանքով: Ոչ մահ ունեն, ոչ ծնունդ, ոչ սկսարություն, չեն ուտում, չեն խմում, քանի որ դրա կարիքը չեն զգում: Հրեշտակների գլխավորները սերովբեներն ու քերովբեներն են, որոնք իրենց թևերի վրա են պահում Աստծո գահը: Մյուս հրեշտակները բաժանված են երկու մասի, որոնցից մեկը վեցերորդ երկնային հարկի մեջ է ապրում և անընդմեջ փառաբանում Աստծուն, իսկ մյուսը ծառայության մեջ է գտնվում երկնքի ու երկրի միջև, կատարում Աստծո հրամանները: Այս 12 դաս հրեշտակներից երեքի առաջնորդները՝ Սադայելը, Բեհեղգեբուխը և Բելիարը, տեսնելով իրենց բարձրությունն ու փառքը՝ հպարտանում են ու Աստծո դեմ ապստամբում: Աստված բարկանում է և այս երեքին իրենց գորքերով ցած թափում երկնքից՝ ի պատիժ իրենց ամբարտավանության: Առաջին գունդը հասնում է Սանդարամետ՝ Սադայելի գլխավորությամբ, երկրորդը՝ Բեհեղգեբուխի գունդը, հայտնվում է երկրի վրա, իսկ երրորդը՝ Բելիարինը, երկնքի ու երկրի արանքում: Վերջինս գոյում է և «Կեցո՛, Տեր» ասում, երկրորդ գունդը՝ «Տեր, ողորմես», և Աստված լսելով վերջիններիս գոյումը՝ թողնում է նրանց այնտեղ, ուր գտնվում էին գոյման պահին (Բենսե 1900, 8–9. Նժդեհեան 1902, 265–268): Ջավախքի հավատալիքներում վերոնշյալ եռյակից երկուսի անունները փոխվում են՝ Պեղծեոն, որ մնացել է երկնքի ու երկրի միջև, Մաթայել, որ իջել է երկրի վրա, և Լեկեոն, որ անցել է անդունդը (Լալայեան 1896, 324): Այժմ այդ հրեշտակները, որ զրկված են գեղեցիկ տեսքից ու լույսից, սատանա են կոչվում և գտնվում են դժոխքում, երկրի վրա և երկրի ու երկնքի մեջտեղում: Ժողովրդական ավանդագրույցներից մեկի համաձայն «Աստուած շատ կը սիրէր Ադամը, Մեծ հրեշտակ մը շատ նախանձուեաւ. «Երէկի Պոլոճը (որդ-մարդ) իզմէ աւելի կը սիրուի» կըսէր ու կը կատողէր: Օր մը նոյնինքն չկատարեց իր հերթին պաշտամունքը: Աստուած բարկանալով՝ Երկինքէն վար թափեց այն հրեշտակն ալ, իր ընկերներն ալ, որոնք Դե ու Սատանայ եղան. Իսկ այն դևերն, որոնք հրեշտակներու կեցո աղօթքի ատեն կեցան օդին մէջ՝ կոչուեցան Կախ-Դե» (Թովա-Կոպո 1898, թիւ 22, 426) կամ Օդապայ (Թովա-Կոպո 1898, թիւ 24, 462): Այս գրույցի զուգահեռները տեսնում ենք հարևան շատ ժողովուրդների բանահյուսության

3 «Հրեշտակ» բառը, ըստ լեզվաբանների, ծագում է ավեստայի լեզվի՝ գեղեցիկի «fraēsta» կամ պահլավերեն «frēstak» բառերից, որոնք երկու դեպքերում էլ բուն իմաստով թարգմանվում են որպես պատգամավոր, սուրհանդակ, լրաբեր, թղթատար: Նույն թարգմանությամբ են հանդես գալիս նաև հունարեն «angelos» (որտեղից էլ լատիներեն՝ angelus, անգլերեն՝ angel, ռուսերեն՝ ahreл՝ ձևերը) և եբրայերեն ու արաբերեն «malāck» բառերը (<https://hy.wikipedia.org>):

4 Հին Կտակարանում սատանային դևերի արքայազն էին համարում: Նրան նաև Բելիար և Բեհեղգեբուղ էին անվանում (Քլայնս 1999, 133):

մեջ: 19-րդ դարի վերջերին ոուս բանահավաք Ա. Կամենսկի գրառած գրույցներից մեկում դևերի առաջացման մասին պատմվում է հետևյալը. «Շատ ու շատ տարիներ առաջ, երբ Աստված դեռ չէր ստեղծել Երկիրը, հրեշտակների առաջնորդը որոշում է տիրանալ Աստծո գահին և ըմբոստանում է նրա դեմ: Աստված աստիկ գայրանում է և, դուրս գալով նրա դեմ, երեք օր ու գիշեր հալածում է ըմբոստին ու նրա համախոհներին՝ վերջիններիս վրա շարժելով երկնքի ամպրոպները: Ըմբոստ հրեշտակն իր գործով վերջապես կանգ է առնում և զղջում, սակայն Աստված չի ներում, և հրամայում է նրանց լինել դևեր՝ սատանայի առաջնորդությամբ, և գցում է անդունդը: Ընկած հրեշտակները անդունդի մեջ ստեղծում են իրենց թագավորությունը՝ դժոխքը, որտեղ և ապրում են մինչև օրս» (Бурцев 1910, 11): Մլավոնական առասպելաբանության մեջ տարածված գրույցների համաձայն՝ ընկած հրեշտակները, դևեր դարձած, գործում են այն վայրերում, ուր որ հասել են անկման պահին (леший – անտառում, водяной, русалка – ջրում, домовой – տան կտուրին և այլն) (Виноградова 2000, 69):

Դևերի քանակի մասին գրավոր աղբյուրներում շատ տարբեր հիշատակություններ կան: Ստեփանոս Յագրճյանի հաղորդմամբ «տվաներն երեսուն երեք են թոռով՝ զատ զատ անուններով ու յատկությամբ» (Եագրճեան 1885, 1007): Ենթադրում ենք, որ նշված երեսուներեք թվի մեջ ժողովուրդը ընկալել է Սաղայել, Բեհեղգեբուխ և Բելիար⁵ (կամ Լեկեոն, Պեղծեոն) առաջնորդներին՝ յուրաքանչյուրին կցելով տասական ենթակա: Ըստ Գր. Տաթևացու՝ դևերի քանակը կազմում է բոլոր հրեշտակների շուրջ մեկ երրորդը (Գրիգոր Տաթևացի 1729, 152–153), իսկ ըստ Աստվածաշնչի՝ հրեշտակների թիվը «բիր բիրաուր եւ հագար հագարաուր» է կամ նրանց «համրանքը ծովու աւազին չափ է» (Յայտնություն Յովհաննու 5:11, 9: 16, 20: 7. հմմտ. նաև Դանիել 7:10): Ուրբաթագրքում էլ խոսվում է վեց հարյուր դևերի մասին, որոնք հալածվելու են Արաութ, Մարաութ, Սեդրակ, Միսաք, Եղկիոս, Սինայել, Ուրիել հրեշտակների անունները հիշելիս (Ուրբաթագիրք 2012, 30–31): Մատենադարանի №6677 ձեռագրում, որը կրում է «Հարցմունք Սողոմոնի թագաւորին» խորագիրը, հիշատակվում են յոթանասուներկու դևերը, որոնք հարցման են ենթարկվում Սողոմոնի կողմից:

Հրեշտակների քանակի մասին դիտարկումները համեմատության մեջ դնելով այլ ժողովուրդների կրոնական ու ժողովրդական պատկերացումների հետ՝ գրեթե նույն պատկերն ենք տեսնում՝ որոշակի փոփոխություններով ու հավելումներով: Հնդկ-

ների նախնական կրոնական և հավատալիքային պատկերացումներում տեղան, ինչպես արդեն նշվեց վերևում, իբրև բարի, իսկ ազուրան՝ իբրև չար ոգիներ էին ընկալվում: «Տէվաներուն համրանքն է երեսուն խոր, որ կընէ երեք հարիւր միլեօն, իսկ ազուրներուն համրանքն է ութսուն խոր, ութը հարիւր միլեօն» (Կարապետեան Տէրոյենց 1862, 97–98): Ռուսների կարծիքով նույնպես «դևերի քանակը մի քանի անգամ գերազանցում է հրեշտակներին» (Бурцев 1910, 11–12): Դևերի քանակի մասին են վկայում նաև «Քիչ դև կար ի դիվոնց, մեկն էլ իջավ հերդընուց» կամ «Քիչ դև կեր մըջ ջաղչին, մեկ լե մտավ շողտնից» ժողովրդական առածները (Ղանալանյան 1960, 72):

Խոսելով գրույցներում, հավատալիքներում, քրիստոնեական ու ժողովրդական ավանդության մեջ հանդիպող դևերի քանակի մասին՝ չենք կարող չանդրադառնալ լեկեոն⁶, լեգեոն կամ լեգեոն անուններով հիշատակվող դևին, որը, կարծում ենք, և՛ չար ոգի (Հարությունյան 2006, 157) է, և՛ ոգիների խումբ: Անվան ծագումը հավանաբար կապված է հունական զորաբանակների, զորախմբերի լատիներեն «լեգեոն» բառի հետ: Աստվածաշնչյան մի գրույցում Քրիստոսը գերեզմանատանը բնակվող դիվահարին տանջող դևին հարցնում է, թե ինչ է վերջինիս անունը: Դևը պատասխանում է. «Իմ անունս Լեգեոն է, վասն զի շատուր ենք» (Աւետարան ըստ Մարկոսի, Ե 9–10): Տիրոջ հրամանով դիվահարը ազատվում է Լեգեոնից, և դևերը աղաչում են Քրիստոսին իրենց ուղարկել խոզերի մեջ: «Երբ պիղծ ոգիները ելան, խոզերուն մէջ մտան եւ երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց (երկու հազարի չափ կային) ու ծովու մէջ խեղդուեցան» (Աւետարան ըստ Մարկոսի, Ե 12–13): Ջավախքի հավատալիքներում Լեկեոնը Աստծո ընկած հրեշտակներից մեկն է, դժոխքի տիրակալը:

Հայկական գրավոր աղբյուրներում և բանավոր ավանդության մեջ հանդիպում ենք մի շարք դևերի, որոնք ունեն հատուկ անուններ: Վերջիններիս վերագրվում են որոշակի հատկանիշներ կամ գործառույթներ: Ալիշանը հիշատակում է «Վշտիկ՝ դահիճ դև, որին Սողոմոնը 50 օր բռնել-կապել է, «Միդարեւ, որ նստի ի տան անկեալ», «Գիշերակի դև, որ լինիս ի կերպս ճանճից և նստիս ի վերայ բըղանցն և դարձուցանես սեւ», նաև՝ կենդար, նուփիւագ, իդասեր» (Ալիշան 2002, 112–113) և այլն: Իզմիտի հայերի հավատալիքներում դևերի մեջ առանձնացվում են *Ազեկույ դևերը*, որոնք հյուսում են ձիե-

5 Մերաստահայերը բերիալ, բելիար, բեմիառ ասելով նկատի ունեն անգութ, անողոք, բռնավոր, խափանարար, արգելիչ (Գաբրիելեան 1952, 115):

6 Աշխարհի տեսքի և կառուցվածքի մասին առասպելներում Լեկեոնը (կամ Լեիաթանը) հսկայամարմին ձուկ է, որը պտտվում է օվկիանոսի մեջ գտնվող և տիեզերքը խորհրդանշող վիթխարի լեռան շուրջը (Հարությունյան 2000, 14–15):

րի պոչերը, և *Հարսնևոր դևերը*, որոնք «գիշեր ատեն ընդհանրապես դեռատի մանչերու կամ աղջիկներու այտերը կամ ձեռքերը հինա կը դնեն. այս արատները երբեմն անջնջելի կը մնան» (Գապասագալ 1899, թիւ 34, 541): Դևերի անվանադրման երևույթը տեսնում ենք նաև հին իրանական բանավոր ավանդույթում: Ի տարբերություն հայկական դևերի, որոնց անունները պայմանավորված են նրանց գործառնությունով, իրանականում, մասնավորապես զրադաշտականության մեջ, «դիվային կերպարներ են դարձել բոլոր մարդկային արատներն ու վատ արարքները. *Ակաբաշան* համառությունն ու կամակորությունն է մեղքի մեջ, *Ուրան*՝ շատախոսությունն ու շաղակրատանքը: Այն հատկապես վտանգավոր է նրանով, որ մարդկանց ստիպում է խոսել ուտելու ժամանակ: *Փուշը* գծուծության դևն է, *Սպազգան*՝ չարախոսության, *Բուշասպրան*՝ ծուլության, *Վարենան*՝ կրքի և ամուսնական անհավատարմության և այլն» (Էբրահիմի 2014, 10): Հարավ-սլավոնական առասպելաբանության մեջ ճակատագրի դևը՝ *Մու(դ, ձ)ենիցան* (առաջացել է *судьба* – ճակատագիր բառից), կանխորոշում էր երեխայի ճակատագիրը ծննդյան պահին՝ ողջ կյանքի համար (Левкиевская 1996, 195): Ա. Դանալանյանի հաղորդած մի ավանդագրությունում Դևը ուժեղ ու քաջ մի երիտասարդի հատուկ անուն է, որի անունով մինչև հիմա էլ Արցախում ցույց են տալիս նրա փորած ջրանցքը՝ Դևի առուն (Դև արդ) (Դանալանյան 1969, 93–94):

Բնակության վայրը

Դևերն ապրում են մարդկանցից հեռու՝ Դևատանում: Գրեթե ամենուր դևերի բնակարան են համարվում լեռներն ու սարերը, այրերն ու քարանձավները, մութ կիրճերը, խոր-խոր ձորերը, անջուր հորերն ու անջրդի անապատները, ձիթհանքերն ու ջրաղացները: Դիվաբնակ վայրերը ժողովրդի կողմից ստացել են նաև դիվատուն, քաջքատուն, քաջանց տուն, քաջքասար, քաջքաձոր և այլ անվանումներ: Խոսելով Հոգվոց վանքի, նրա աշխարհագրական դիրքի ու տեղանքի մասին՝ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Վանի Արևելյան լեռ յուր ստորոտին մերձը ապառաժ մը ունի, զոր Դարբնացքար կը կոչեն կամ Դիվաց այր» (Սրվանձտյանց 1982, 13): Նա իր ասածը հաստատում է Խորենացու մեկնությամբ. «Բանգի դեք բազումք բնակեալ էին անդ, եւ պատրէին գմարդիկ տեղոյն տուեալ յայնմ տեղոյն՝ դեղս ախտականս առ ի կատարել գպղծութիւն ախտից, կռանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին, յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անդ առ քրային դեգերէին, առեալ ի չաստուածոցն (Անահտայ) ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն... Եւ անուանէին զանուն տեղոյն

այնորիկ Դարբնացքար» (Մովսէս Խորենացի 1843, 249): Շիրակում պատմվել է, որ «Մուղանչադրադու ձորը առաջ դիւաց բնակարան է եղել, այնպէս որ դրա մօտով մարդ չի կարողացել անցնել: Մէկ օր հրեշտակը ճգնատրին թևերի վրայ նստեցրած՝ բերում ու այդ դևերի գլխին կանգնեցնում է: Ճգնատրը մէկ երկու խօսքով դրանց անիծում է թէ չէ՝ բոլորը իսկոյն աներևոյթանում են» (Մխիթարեանց 1901, 201): Հովհ. Թումանյանի գրառած առասպելներից մեկի համաձայն «Լոռու Դև-հսկաները՝ Դև Բեթը (Դեբետ գետը), Դև-Ալը (Դվալ սարը) և ուրիշները հափշտակել են Ծաղկունքի (Արագածի) աղջիկը, բերել Լոռի»⁷: Դևի անվան հետ են կապվում ոչ միայն աշխարհագրական տեղանուններ, այլ նաև քրիստոնեական կառույցներ ու շինություններ:

Դիվաբնակ վանքեր և դիվամարտիկ հերոսներ

Ժողովուրդը հավատում էր, որ հայկական որոշ վանքեր ու եկեղեցիներ ունեցել են իրենց ծառայող դևերը: Տարոնի Քարքե լեռան վրա, Իննակնեան կոչված տեղում կանգնեցված են եղել Գիսանեի և Դեմետրի արձաններն ու մեհյանը, որոնք լի էին դևերով: Գ. Լուսավորիչը դրանք քանդելով՝ Հովհաննես Մկրտչի ու Աթանագիսեսի նշխարների վրա նույն տեղում կառուցում է *Մուրբ Կարապետի վանքը*: Ս. Հարությունյանի դիտարկմամբ սա նշանակում է, որ «Մշո Ս. Կարապետի վանքը կառուցված է երկրի և ստորերկրայքի կապի տեղում, այսինքն՝ հին հայոց պատկերացմամբ՝ Աշխարհի կենտրոնում, ու դժոխքի կամ Մանդարամետք անդնոցի դռներն են, Իննակնեան տեղում: Ս. Կարապետի վանքը փաստորեն դառնում է Մանդարամետք անդնոցի կամ դժոխքի բերանը փակող ամրություն, ինչպես Երուսաղեմի տաճարը» (Հարությունյան 2000, 34): Այլ կերպ ասած՝ Հովհաննես Մկրտչի կամ Ս. Կարապետը հանդես են գալիս որպես դժոխքի դռների ու մահվան կործանարար: Գ. Սրվանձտյանցի հաղորդմամբ հենց Գիսանեի արձանի տեղում, որ Զենոբ Գլակը կոչում էր «Դուռն դժոխսոց», դևերի բազմությունն անթիվ էր: Եվ նույն տեղում կառուցված *Ս. Հարություն* մատուռի մեջ մի կյորավուն մուտքով փոս էին ցույց տալիս՝ հողով ու քարերով լցված, որը Դիվատուն էին կոչում: Ուխտավորներն ականջ էին դնում՝ լսելու համար դևերի տնքոցը: Ասում էին, որ «հոս է Ս. Լուսավորիչ լցեր գլուկեր և կապեր, որք կապանաց մեջ կհեծեն ու սանդարամետեն իրենց ձայնը մինչև հորի բերանը կհասնի» (Սրվանձտյանց

7 Մեջբերված առասպելը հիմք է հանդիսացել «Անուշ» պոեմի Գ. ինքնագրի հետևյալ տողերի համար. Դերձ Արագածի նագանի դստեր, Որ Դև-Բեդ, Դև-Ալ և այլ հսկաներ, Խոլխոլ հսկաներ հնոց աշխարհի, Փախցրին, բերին անառիկ Լոռի (Թումանյան 1989, 288):

1982, 94): *Ս. Կարապետին* ձոնված մի գովերգի հետևյալ տողերում ասվում է.

Սըբ Կարապետ չանգի դիվան,
Քումպեթներ հեռվեն կերևան,
Էն խափանեց չարք ու դիվան,
Մշու սուլթան սըբ Կարապետ:
(Բենսե 1972, 139)

Սուրբ Կարապետը հայ ավանդության մեջ «մուրատատու», «դարդի դարման», «հասեճար», «ցավոց փարատ», «ճարտար ջառահ»⁸, «ջառահ հեքիմ», «մկրտարար» լինելուց բացի նախ և առաջ «չարխափան» է՝ դևերին կապելու, զնդան դնելու կամ ստորերկրայքում բանտարկելու գործառույթներով:

Ժողովրդական ավանդության համաձայն Մշո Սուրբ Կարապետ վանքում մի *կաղ դև* է ապրում, որը շալակում է վանքի մոխիրը և գետնի տակով երկու օրվա ճանապարհ անցնելով դեպի Տիգրանակերտ՝ թափում է Փրեքաթման գյուղի մոտ՝ գոյացնելով մի հսկա մոխրաբլուր: Ս. Կարապետ վանքի Կաղ դևի մասին հյուսված վիպերգում ասվում է հետևյալը.

Ս. Կարապետ խաքո նման,
Որ շինած էր վըր ուր խման,
Ժողվեց դիւան, լցեց զնդան,
Յադթեց դիւան, քե կան եաման:
Ասաց գեամ ըլլեմ քե փոշեխան,
Տանեմ թափեմ Փրեյ Պատման
Չուր Քրիստոս գեայ դատաստան
Մուրատատու սուրբ Կարապետ:
(Սեդրակեան 1874, 7)

Վիպերգի տարբերակներից մեկում Ս. Կարապետի փոխարեն հանդես է գալիս Գ. Լուսավորիչը: Ժողովրդական գրույցներում վերջիններս հանդես են գալիս որպես դիվամարտիկներ՝ օժտված չարխափան, դիվահալած հատկություններով:

Լուսավորիչը ժողվեց դիվան լըցեց զընդան:
Կաղ Դևն եկավ ասաց, յաման.
Ջիս մի դներ զընդան.
Ես կ'եղիմ Սուրբ Կարապետու փոշեխան,
Տանիմ թափեմ Փրեքաթման,
Մինչ օր Քրիստոս գա դատաստան:
(Սրվանձտյանց 1978, 75)

Գրիգոր Լուսավորիչը պատմիչների հիշատակություններում և ժողովրդական բանավոր ավանդության մեջ ներկայացվում է որպես Քրիստոսի գործակից և դիվամարտ հերոս, որի շնորհիվ դևերը կործանվում են⁹, և նրանց պաշտամունքի վա-

րերում նոր քրիստոնեական սրբատեղիներ են հիմնվում: Ազաթանգեղոսը վկայում է «Եւ ամենայն դևքն ի փախուստ դարձեալ՝ առաջից մարդկանն երևեցան, զօճիս զգլխով արկեալ, և զճակատ հարեալ, և զճիչ բարձեալ՝ մեծագոյ լալեօք ասէին, թէ «Վայ մեզ, վայ մեզ, վայ մեզ, զի յամենայն երկրէ փախստական արար զմեզ Յիսուս որդին Մարեմու, դստերն մարդկան. և աստի ևս ի ձեռն կապելոյս և մեռելոյս եհաս մեզ փախստական լինել: Արդ՝ յո՞ղիմեալ փախիցուք, զի փառք նորա լցին գտիեզերս: Այլ երթամք մեք ի բնակիչս լերինս Կալկասու, ի կողմանս հիւսիսոյ. Թերևս անդ հնար լիցի և ապրել մարդասցուք: Զի առանց հանգստեան զօդս կոծեալ՝ անջատ զմեզ ի բնակութենէ մարդկան՝ կատարել զցանկութիւն կամաց մերոց նոքօք» (Ազաթանգեղոս 1983, 438):

Վասպուրականում գտնվող Հոգվոց վանքում ապրող Ղուդրաթ խաթուն (Սրվանձտյանց 1978, 75) անունով դևը նույնպես թոնրի մոխիրներն է թափում և հանդես գալիս որպես վանքի փոշեխան:

Ասում են, թե Սեբաստիայի հարավարևելյան կողմում գտնվող *Ս. Գևորգի վանքի* տեղում առաջ դևեր են բնակվել: Այդ պատճառով էլ վանքը կոչվել է Դևոցա կամ Տեվքսե վանք (Ղանալանյան 1969, 256): Գրավոր աղբյուրներում վանքը հիշատակվում է նաև Տեօծի, Դեօձայի, Դեօձկայի, Դեօցայի, Տայօցայի, Տեվեկսեի, Տեվեկի Ս. Գեորգյա վանք: Եկեղեցու տարբեր անվանաձևերը կապված են այսպես կոչված դև-օձի հետ. «Աւանդաբար կ'ըսուի, թէ ժամանակաւ մօտերը բնակող դեւ-օձ մը ժամանակ ժամանակ վանքին նախիրները եւ տուար ու մարդ յափշտակելով կը լափէ եղեր եւ որ վանքին վանահայրներէն միոյն հրաշիւքն քար կտրեր է. Յարդ ցոյց կու տան քարացեալ այդ մնացորդը, որ արդարեւ հսկայ վիշապի մը կը նմանի» (Ոսկեան 1945, 25–28): Ժողովրդական գրույցների համաձայն դևերի մի ահագին բանակ էլ ապրում է *Ս. Կոնոնոսի վանքում*՝ կարասների մեջ լցված, բերանները զմուսած, գետնի տակ թաղած, և մնալու են այնտեղ՝ մինչև Քրիստոսի դատաստանի օրը (Սրվանձտյանց 1978, 75):

Կործանված մեհյանների տեղում կանգնեցված վանքերի, այնտեղ բնակվող դևերի մասին գրույցներն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ քրիստոնեության մուտքից հետո դիվացվել են նախկին կուռքերը՝ սպասավորների հետ միասին: Այսինքն, կուռքերն ու աստվածները ոչ այլ ինչ էին, քան դևեր: Նրանց գործողություններն ընկալվում էին դիվային, հակաբնական, հակամարդկային: Սրանց հակադրվում են արդեն քրիստոնեական սրբությունները՝ նախորդների չարն ու չարիքը վնասազերծելու, բնության ու մարդկության բարգավաճումն ապահովելու ձգտումներով: Այս ընկա-

8 Բժիշկ, վիրաբույժ:
9 Գր. Լուսավորիչի դիվամարտության գլխավոր գեներալ համարվում է խաչը:

լումն ու համոզմունքը արդյունք է հին կրոնի՝ հեթանոսության պարտության և նորի՝ քրիստոնեության հաղթանակի: Վերոնշյալ եկեղեցիներն ու վանքերը հայ իրականության մեջ մեծ ժողովրդականություն էին վայելում, նրանց համբավը տարածված էր ամենուր: Ասվածի վկայությունն են եկեղեցիների ու վանքերի շուրջը հյուսված բանահյուսական նմուշներն ու ազգագրական նյութերը:

Հայ բանավոր ավանդության մեջ, միջնադարյան ձեռագրերում, ախտարական գրականության մեջ բազմաթիվ հիշատակություններ կան Իսրայելի Դավիթ թագավորի որդի Սողոմոնի մասին, որին տրվել է Իմաստուն անունը: Ժողովրդի գիտակցության մեջ *Սողոմոն Իմաստունն* ընկալվում է ամենագոր, դևերի գորքերին հալածող ու կապող թագավոր: Հաճախ հիշատակվում են նաև Հիսուս Քրիստոսը, Ս. Կարապետը (Հովհաննես Մկրտիչը)¹⁰, Գրիգոր Լուսավորիչը և տարբեր ճգնավորներ ու հոգևորականներ: «Գիր Սողոմոնի» կամ «Սողոմոնի» կոչվող գրքերը միջնադարյան ախտարական գրականության մեջ տարբեր խմբագրություններով հայտնի են իբրև «Հարցմունք Սողոմոնի թագավորին յոթանասուներկու դևերաց» կամ «Եօթանասուն և երկու հարցմունք Սողոմոնի» և այլ խորագրերով ժողովածուներ: Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի №6677, 6678, 8423, 8428 ձեռագրերի՝ Սողոմոնը անուն առ անուն¹¹ (Թութեան, Ղամաշ, Լալանոս, Խարե, Մարոս, Շիքար, Դծուխ, Մաղուշ, Մաղուր, Մահուվար, Գարջալ և այլն) կանչում է յոթանասուներկու դևերին¹² և երդվեցնում նրանց: Խոստովանության արդյունքում պարզ է դառնում նրանց բնակության վայրը, ներգործության ոլորտը, մարդկանց պատճառած վնասները, հարուցած հիվանդությունների բուժման միջոցներն

ու եղանակները: Զրույցներից մեկում ասվում է. «Սողոմոն Իմաստունը, որ տեսաւ, թէ դևերը հակառակ են ու իր կամքը չեն կատարում, բոլորին լցրեց պղնձէ կուժերի մէջ ու բերանները ամուր փակելով, իր մատանիքով կնքեց ու թափեց ծովը: Այդ չարերը այնքան պիտի մնան ծովում, մինչև որ Քրիստոս դատաստան գայ» (Մխիթարեանց 1901, 202): Ժողովրդական բանավոր ավանդության մեջ, որպես Սողոմոնի դիվահալածության գործիքներ հիշատակվում են նրա մատանին կամ կնիքը, գոտին, ձիու նալը:

Ակնում պահվող 1725 թ. մի հմայիլում «Աղօթք կապանաց դիւաց»-ի տակ կարդում ենք հետևյալը. «Սողոմոն Իմաստուն ետես զիշխանն դիւաց խաւարի, գոռայր իբրև զամպ. Ճչէր որպէս զվիշապ: Ասէ Սողոմոն, ո՛վ պիղծ և անիծեալ զինչ ես դու ասէ դևն ես եմ՝ իշխան դիւաց, և մայր ամենայն չարեաց և մեղաց. Ես եմ, որ ատելութիւն ածեմ՝ ի մէջ եղբարցն ածեմ՝ վէճ և կոխ և խոռվութիւն. և պոռնկութիւն մտանեմ ի սիրտ մարդկանց, և երբեմն սերմանեմ զչար ցանկութիւն: Ասէ Սողոմոն բարձրացիր, որ ես տեսնեմ, և բարձրացաւ քան զլեռոն և կամէր անկանել ի վերայ նորա: Ասէ Սողոմոն փոքրկացիր, և փոքրկացաւ քան զհատն մանանխոյ, և Սողոմոն կալաւ զնա և եղ ի յաջ մատանին. և մաս մի ի տախտակացն սինեայի եղ ի վերայ ական մատանոյն: Այլ և Նոյի տապանական, ի Յակոբայ սանդխտան, և Ահարօսի գաւազանան և Կոնոնոսի աղօթիքն, հալածեալ և խափանեալ եղիցի ամենայն չար դևքն և այլն. Ի ծառայէս Աստուծոյ...» (Ճանիկեան 1895, 149–150):

Սողոմոն Իմաստունի մասին ժողովրդական հետևյալ գրույցը, որ տեղ է գտել նաև հայ գեղարվեստական գրականության մեջ, ներկայացնում է նրա ուժն ու իշխանությունը դևերի ու չար ուժերի վրա. «Երբ Քրիստոս Հոգվովն ի դժոխս իջավ, բոլոր հոգիքն ազատեց, միայն թողեց չորսը՝ Կայենին, Հուդային, Սողոմոնին ու Անակին: Քրիստոսի գնալուց հետո այս ու այն կողմ ցրված սատանաները վերադառնում են ու տեսնելով Սողոմոնին՝ սարսափում: Սողոմոնը սատանաներին ասում է, որ Քրիստոսն իրեն հրամայել է դժոխքի տեղը մի մեծ տաճար շինել՝ Երուսաղեմի տաճարի ձևով, մի տարբերությամբ, որ այս տաճարն իր հիմքի տակ ունենա մի կամարակապ խոր անդունդ, ուր պիտի ամփոփի սատանաներին, որ այնտեղ մնան հավիտյան և էլ լույս աշխարհի չտեսնեն: Սատանաները բողոքում են, թե Սողոմոնն անգութ մարդ է և դժոխքում անգամ հանգիստ չի տալիս իրենց: Բոլոր դևերն (Ուրիել, Մաղայել, Դակուել և այլք) իրար իմաց տալով՝ հավաքվում են և, Սողոմոնին դժոխքից հանելով, դնում են դրախտի ճանապարհին: Քրիստոսը, Չիթնյաց սարի մոտ Սողոմոնին տեսնելով, գովում է

10 Սուրբ Կարապետը նորկուսակարանյան Հովհաննես Մկրտչի մակդիրներից մեկն է, որ հայ քրիստոնեական ավանդության մեջ գործածվում է իբրև առանձին սրբանուն՝ զուգահեռ Ս. Հովհաննեսին: Հայ ավանդության մեջ այդ սուրբն ունի յոթ անուն՝ Հովհաննես, Մկրտիչ, Կարապետ, Վարդապետ, Մարգարե, Առաքյալ, Մարտիրոս: Նրա գլխավոր սրբատեղին գտնվում էր Մուշում, Քարքե լեռան վրա: Նա ժողովրդի մեջ հաճախ հորջորջվում էր Մշո սուրբան սուրբ Կարապետ կամ Սուլթան սուրբ Կարապետ կոչումներով (Հարությունյան 2006, 299): Վանքը հիշատակվում է նաև Չանկլի դիվան սրբ Կարապետ անունով, որ նշանակում է զանգակավոր ուխտատեղի (սույն տեղում, 319):

11 Քանի որ դևերին հատուկ է զանազան կերպարանքներ ցույց տալ, ուստի մարդիկ ըստ այդ կերպարանքների անուններ են դնում (Եզնիկ Կողբացի 1994, 81):

12 Ձեռագրում դևերը հստակորեն նկարագրվում են՝ կեսմարդակերպ, կես կենդանակերպ, Ղամաղ դևը՝ խոզի գլխով, մարդու ձեռքերով, կովի ոտքերով, մյուսը՝ մարդու կերպարանքով, կովի գլխով, դուշի ոտքերով, Մարոսը՝ շան կերպարանքով, Մասիլուս դևը՝ մարդու գլխով, օձի լաշով և այլն: Կնոջ կերպարանք ունեցող դևերը նկարագրվում են օձերի առկայությամբ՝ բերանի մեջ, ձեռքին բռնած, օձերով փաթաթված և այլն (Մատենադարան, ձեռագիր №6677, թերթ 28բ-48):

վերջինիս իմաստնությունը և ասում, թե ինքը գիտեր, որ Սողոմոնը «դժոխքումը կենող պտուղ չէր» (Ադայան 1962 հտ. 1, 24–25):

Հայ ժողովրդական հեքիաթներում ևս դևեր կան, սակայն զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ հեքիաթային դևերն իրենց գործառույթներով և նկարագրությամբ տարբերվում են գրույցներում և սնահավատական գրույցներում պատկերվող և նկարագրվող դևերից: Հրաշապատում հեքիաթներում դևերը սովորաբար նկարագրվում են իբրև երեք, հինգ, յոթ, քառասուն գլխանի հսկա, գերբնական ուժի տեր արարածներ: Նրանք երեք եղբայրներ են՝ Սպիտակ, Կարմիր և Սև: Դևերի գործառույթները հրաշապատում հեքիաթներում միատիպ են, նրանք հեքիաթային բարիքների, գեղեցիկ արքայադուստրերի հափշտակողներ են, ավազակությամբ զբաղվողներ, մարդկային ցեղի թշնամիներ: Օրինակ, ATU 301 թվահամարին համապատասխանող հեքիաթներում թագավորի այգում ամեն տարի աճող անմահական խնձորները տանում է դևը (ՀԺՀ 1959, 23–39. ՀԺՀ 1963, 244–256): Հեքիաթներում հանդիպող դևերի կամ վիշապների գործառույթներն ու հարկանիշները Գ.Սրվանձտյանցը բնութագրում է՝ ասելով. «Թե՛ անոնցմե մեկը հազար մարդու կրնա հաղթել, թե՛ լեռներու չափ քարեր կրնան վերցրնել դնել, թե՛ մարդու միս կ՛եփեն, կ՛ուտեն, թե թագավորի աղջիկ կը գողնան, կը տանին իրենց կին ընելու համար և այդ աղջկանց առջև շատ անձնանվեր և հպատակ կը մնան» (Սրվանձտյանց 1978, 59–60): Դևերի բնակավայրերը հեքիաթներում ցամաքած ջրհորներն են, քարանձավները, այսինքն՝ վայրեր, որոնք հեքիաթային պատկերացումներով համապատասխանում են անդին աշխարհին, ասել է, թե՛ դևերը այնկողմնային աշխարհի ուժեր են: Հայկական հեքիաթներում թագավորի փոքր տղան, հայտնվելով այնկողմնային աշխարհում, հաղթում է Սպիտակ, Կարմիր ու Սև դևերին և ոտք է դնում մինչ այդ անձանոթ Սպիտակ, Կարմիր և Սև հողերի վրա: Թ.Հայրապետյանի դիտարկմամբ «Սպիտակ, Կարմիր, Սև հողերը համապատասխանում են աշխարհի կառուցվածքի՝ սպիտակ (Երկինք), կարմիր (Երկիր), սև (Ստորերկրայք) հարկերին» (Հայրապետյան 2016, 236):

Դևերի բնակավայրերը կամ աշխարհները հեքիաթներում նկարագրվում են նաև որպես անբավ հարստության և գանձերի վայրեր: Այստեղ են դևերը թաքցնում երեք արքայադուստրերին՝ երեք քույրերին, որոնց փրկում է թագավորի տղան և նրանցից որպես պարգև ստանում ոսկե իրեր՝ իբրև անդրաշխարհյան փորձությունների ապացույցներ:

Շիրակի ժողովրդական հավատալիքներում դևերը պատկերացվում էին հեքիաթային դևերի նմանությամբ. «էնպես խոշոր բաներ, որ տեսնողը

կգարհուրի. Գլուխները մենձ, օխտը գլուխ ունին, պոռշները հաստ, օխտը թիզ կախ ընկած՝ մինչի ծնկներուն կհասնի, ամեն ոտը մեկ գերանի դտար է, աչքերը կավե քեարսանկ գլմանին, էնքան որ խոշոր են. էնպես էլ կա, որ մեկ աչքը ունի. Բիրադի սև, ճերմակ ու կարմիր են» (Մխիթարեանց 1901, 170–171): Հետաքրքրական է նկատել, որ Շիրակի ժողովրդական պատկերացումներում դևերի արտաքինի բնութագրումը համընկնում է հեքիաթային դևի նկարագրությանը:

Եզրակացություն

Հայ ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերում (առասպել, հեքիաթ, ավանդագրույց, գրույց, վիպերգ, առած, ասացվածք և այլն) արտացոլված դևը իր զուգահեռներն ունի հարևան և այլ ժողովուրդների կրոնաառասպելաբանական պատկերացումներում և հավատալիքներում:

Սնահավատական գրույցների համատեքստում քննվող դևը դեմոն է և օժտված է չար ոգիներին բնորոշ բոլոր հատկանիշներով: Դևը ստորին առասպելաբանական կերպարներին տրվող ընդհանուր անվանում է, որն իրականացնում է չարի մարմնավորում ընկալվող սատանայի գործառույթները:

Ժողովուրդը չար ոգիների՝ դևերի մասին իր գրույցներն իբրև իրողություն ներկայացնելիս հաճախ վկայակոչում է սուրբ գրքերում կամ հին ձեռագրերում դրանց գոյության փաստն արձանագրված լինելու հանգամանքը:

Չնայած բառի հնագույն ծագմանը՝ դևի մասին պատկերացումներն ու հավատալիքային դրսևորումները աղերսվում են աստվածաշնչյան քրիստոնեական նյութին, ինչը չի կարելի ասել վիշապի մասին, որը խիստ արխաիկ, առասպելաբանական կերպար է:

Գրականություն

Աբեղյան Մ. 1970, Երկեր, հտ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 635 էջ:
Աբեղյան Մ. 1975, Երկեր, հտ. Է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 603 էջ:
Ազգաթանգեղոս 1983, Պատմություն Հայոց, Քննական բնագիրը՝ Գ.Տեր-Մկրտչյանի և Ս.Կանայանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 547 էջ:
Ալիշան Ղ. 2002, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, «Հրագրան», 295 էջ:
Ալաջոյաճեան Ա. 1937, Պատմություն հայ Կեսարիոյ, Բ. հտ., Գահիրե, Կեսարիոյ և շրջակայից հայրենակցական միության Գահիրեի վարչութեան հրատարակութիւն, էջ 1295–2479:
Ադայան Ղ. 1962, Երկերի ժողովածու, հտ. 1, Արույթուն և Մանվել, ազգային վեպ, Երևան, «Հայպետհրատ», 414 էջ:
Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:

- Աստուածաշունչ 2010, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 1345+352 էջ:
- Ավդալբեգյան Թ. 1969, Հայագիտական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 490 էջ:
- Բենսե 1972, Հարք (Մշո Բուլանըխ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հտ.3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 182 էջ:
- Բենսե 1900, Բուլանըխ կամ Հարք գառո, Ազգագրական հանդէս, գ. Զ, Թիֆլիս, տպարան Կ.Մարտիրոսեանցի, 392+42 էջ:
- Գաբրիկեան Կ. 1952, Բառգիրք սեբաստահայ գառառլեցուի, Երուսաղեմ, տպարան սրբոյ Յակոբեանց, 682 էջ:
- Գապասագալ Թ. 1899, Սովորություններ, նախապաշարումներ և այլն Իզմիտ գառառլին մէջ, Բիւրակն, №34, էջ 541:
- Գրիգոր Տաթևացի 1729, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, Մահտեսի Խաչատուր, 810 էջ:
- Եազրճեան Ս. 1885, Տէվա, դի, տի, դև, «Մասիս» շաբաթաթերթ, №3770, Կ.Պոլիս, էջ 1007–1010:
- Եզնիկ Կողբացի 1994, Եղծ աղանդոց, Երևան, ԵՊՀ հրատ., 347 էջ:
- Էբրահիմի Մ. 2014, Դներն ու դիվական աշխարհը իրական ժողովրդական հավատալիքներում, «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածու գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 29 էջ:
- Էմին Մ. 1886, Մովսէս Խորենացին և Հայոց հին վէպերը, III յաւելում «Արձագանքի», Թիֆլիս, Մով. Վարդանեանի տպարան, 85 էջ:
- Թուխ-Կոպո 1898, Աւանդություններ Բիթլիսի մէջ, Բիւրակն, №22, էջ 426:
- Թուխ-Կոպո 1898, Դներ, Բիւրակն, №24, էջ 462:
- Թումանյան Հ. 1989, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հտ.3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 542 էջ:
- Լալայեան Ե. 1896, Ջաւախք, Ազգագրական հանդէս, գ. Ա, Շուշի, 384+136 էջ:
- Կարապետեան Տէրոյենց Յովի. 1862, Դներուն գոյությունը և չարությունը, գլուխ Գ., Երևակ, №124, էջ 97–98:
- ՀԺՀ – Հայ ժողովրդական հեքիաթներ 1959, հտ. II (Այրարատ), Օրբելի Հ. (խմբ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 670 էջ:
- ՀԺՀ – Հայ ժողովրդական հեքիաթներ 1963, հտ. IV (Շիրակ), Մկրտչյան Հ. (խմբ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 551 էջ:
- Հայրապետյան Թ. 2016, Արքեոսիայային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մէջ, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն», 461 էջ:
- Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգայինի Վահէ Մէթեան տպարան, 527 էջ:
- Հարությունյան Ս. 2006, Հայ հնայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 504 էջ:
- Ղանալանյան Ա. 1960, Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 498 էջ:
- Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530+33 էջ:
- Ճանիկեան Յ. 1895, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերություն, Տպարան Մ. Դ. Ռոսիներեանցի, 505 էջ:
- Մալխասեանց Ս. 1944, Հայերէն բացատրական բառարան, հտ.1, Երևան, Հայկական ՄՍՌ պետհրատ., 608 էջ:
- Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր №6677, ախտարք, ԺԹ դար, 98 թերթ:
- Մելիք-Օհանջանյան Կ. 2008, Բառարան-ծանոթագրություններ, Հարությունյան Ս., Դարբինյան-Մելիքյան Մ. (խմբ. խորհ.), Մասնա ծոեր, Հայ ժողովրդական վեպ, ընտիր պատումներ, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., էջ 515–571:
- Մխիթարեանց Աղ. 1901, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Հրատ. Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, 338 էջ:
- Նժդեհեան Գ. 1902, Պատաւաշունչ, Ազգագրական հանդէս, գ. IX, Թիֆլիս, տպարան Կ.Մարտիրոսեանցի, էջ 265–268:
- Ոսկեան Հ. 1945, Սեբաստիայի վանքերը, Դեղսա Ս. Գէորգի վանքը, Հանդէս Ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, №1–12, էջ 25–28:
- Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ատողիկ» հրատ., 820 էջ:
- Սեդրակեան Ար. վրդ. 1874, Քնար Մշեցոց և Վանեցոց, Վաղարշապատ, ի տպարան սրբոյ կաթողիկի Էջմիածնի, 46 էջ:
- Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հտ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:
- Սրվանձտյանց Գ. 1982, Երկեր, հտ.2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 563 էջ:
- Ուրբաթագիրք 2012, Թարգմանութեամբ և աշխատասիրութեամբ Լ. Աւետիսեանի, Երևան, «Ջանգակ», 399 էջ:
- Քլայնս Դ. 1999, Կրոնն ու պաշտամունքը Աստվածաշնչում, Ալեքսանդր Փ., Դրեյն Ջ., Ֆիլդ Դ., Միլլարդ Ա. (խմբ.), Աստվածաշնչի հանրագիտարան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, էջ 113–140:
- Бурцевъ А. 1910, Полное собрание этнографических трудовъ, Русскія народныя сказки и суевѣрные рассказы про нечистую силу, С.-Петербургъ, Тип. Брокгаузъ и Эфронъ, 162 с.
- Виноградова Л. 2000, Народная демонология и мифоритуальная традиция славян, Москва, «Индрик», 431 с.
- Левкиевская Е. 1996, Низшая мифология славян, Волков В.К., Петрухин В.Я., Рогов А.И., Толстая С.М., Флоря Б.Н. (ред. кол.), Очерки истории культуры славян, Москва, «Индрик», с. 175–195.
- Лосев А. 1987, Демон, Мифы народов мира, энциклопедия, т.1, А-К, главный редактор С.А. Токарев, Москва, «Советская энциклопедия», с. 366–367.

ԴԵՎԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ՉՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հասմիկ Գալստյան*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

Սույն հոդվածում ներկայացվում են «դև» բառի ստուգաբանության, դևերի ծագման, դրանց քանակի, բնակության վայրի, գործառնության զրուստրումների հետ կապված խնդիրները՝ սնահավատական գրույցների համատեքստում: Դևերի մասին պատկերացումներն ու հավատալիքային դրսևորումները արտացոլված են հայ ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերում: Դևը աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների ստորին առասպելաբանության մեջ ամենատարածված կերպարներից է: Հեթանոսական դիցարանում լինելով բարի աստվածություն՝ քրիստոնեության մեջ դիվացվում է և դասվում չար ոգիների շարքին: Հիմնաբառեր. *դև, դիվանարդիկ, դիվաբնակ վայր, սնահավատական գրույց, հավատալիք, Գ. Լուսավորիչ, Ս. Կարապետ:*

ДЕМОН В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СУЕВЕРНЫХ СКАЗАНИЯХ

Асмик Галстян*Институт археологии и этнографии НАН РА*

В данной статье рассмотрены вопросы, связанные с этимологией слова «демон» (дев), происхождением демонов, их числом, местом обитания, их функциональными проявлениями в контексте суеверных сказаний. Представления о демонах и связанных с ними верованиях отражены почти во всех жанрах армянского народного фольклора. Демон является самым распространенным образом в низшей мифологии почти всех народов мира. Являясь добрым божеством в языческой мифологии, он был демонизирован и причислен к злым духам в христианстве.

Ключевые слова: *демон, борец с демонами, место, заселенное демонами, суеверные сказания, поверье, Григорий Просветитель, Святой Карапет.*

DEMON IN THE ARMENIAN FOLK SUPERSTITIOUS STORIES

Hasmik Galstyan*Institute of Archaeology and Ethnography NAS RA*

This article presents the issues concerning etymology of the word “demon” (dev), origin of demons, their quantity, place of living and functional manifestations in context of the superstitious stories. The notions about demons and belief manifestations connected to them are reflected almost in all genres of the Armenian folklore. Demon is the most widespread character in the lower mythology of almost all nations. Being a kind of deity in the pagan mythology, he was demonized and ranked among the evil spirits in Christianity.

Key words: *demon, demon fighter, a place inhabited by demons, superstitious stories, belief, Gregory the Illuminator, Saint Karapet.*